Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Ս. Աթանեսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու Անահիտ Ալեքսանդրյանի 2023թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 7-ը Իտալիայի Հանրապետություն գործուղման վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Անահիտ Ալեքսանդրյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Իտալիայի Հանրապետություն (ք. Հռոմ)
2023թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 7-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Ռոտերդամի կոնվենցիայի քիմիական նյութերի վերանայման կոմիտեի 19-րդ հանդիպմանը:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

2023 թվականի հոկտեմբերի 3-ից 6-ը ես մասնակցել եմ «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիայի քիմիական նյութերի վերանայման կոմիտեի (CRC-19) 19-րդ հանդիպմանը: Հանդիպումը

տեղի է ունեցել Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կենտրոնակայանում՝ Հռոմում (Իտալիա):

Նիստի օրակարգին համապատասխան՝ քննարկվել են հետևյալ հարցերը.

1. «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիայի Կողմերի համաժողովի 11-րդ հանդիպման արդյունքների վերանայում, որոնք առնչվում են Քիմիական նյութերի վերանայման կոմիտեի աշխատանքին,

2. Կոմիտեի անդամների ռոտացիա.

3. Մեթիլբրոմիդի և պարակվատի վերաբերյալ որոշումների ընդունմանն աջակցող փաստաթղթերի նախագծերի քննարկում:

Մեթիլբրոմիդ

Մեթիլբրոմիդի վերաբերյալ ընթացիկ նիստում Կոմիտեն իր տրամադրության տակ ուներ միջնստաշրջանային խմբագրական խմբի կողմից պատրաստված որոշման ընդունմանն աջակցող փաստաթղթի նախագիծը, ինչպես նաև դիտողությունների և պատասխանների ընտրանին:

Կոմիտեն ընդունեց որոշում, որով հաստատեց մեթիլբրոմիդի վերաբերյալ որոշման ընդունմանն աջակցող փաստաթղթի նախագիծը և որոշեց այն ուղարկել Կողմերի Համաժողովին քննարկման համար՝ համապատասխան մեկնաբանությունների հետ միասին:

Պարակվատ

Այս նիստում Կոմիտեն իր տրամադրության տակ ուներ միջնստաշրջանային խմբագրական խմբի կողմից պատրաստված որոշման ընդունմանն աջակցող փաստաթղթի նախագիծը, ինչպես նաև դիտողությունների և պատասխանների ընտրանին:

Կոմիտեն որոշում ընդունեց, որով հաստատեց պարակվատի վերաբերյալ որոշման ընդունմանն աջակցող փաստաթղթի նախագիծը և որոշեց այն համապատասխան մեկնաբանությունների հետ միասին ուղարկել Կողմերի համաժողովի քննարկմանը:

Հանդիպման ընթացքում մասնակիցներին ներկայացվեց Բյուրոյի զեկույցը վերջնական կարգավորիչ որոշումների մասին ծանուցումների նախնական քննարկման վերաբերյալ:

Այս ենթակետը քննարկելիս Կոմիտեն իր տրամադրության տակ ուներ Բյուրոյի զեկույցը վերջնական կարգավորիչ որոշումների մասին ծանուցումների նախնական քննարկման վերաբերյալ, Կոմիտեի կողմից քննարկվող քիմիական նյութերի առևտրի վերաբերյալ տեղեկատվությունը և Կոմիտեի կողմից դիտարկված քիմիական նյութերի մասով վերջնական կարգավորիչ որոշումների մասին ծանուցումների վերաբերյալ ամփոփ զեկույցը, ինչպես նաև ծանուցումներ, որոնք նախատեսված են Կոմիտեի կողմից քննարկման համար:

Տեղի է ունեցել հետևյալ նյութերի մասով վերջնական կարգավորիչ որոշումների վերաբերյալ ծանուցումների քննարկում.

- բրոմացիլ,

- կարբարիլ,
- քլորֆենվինֆոս,
- քլորպիրիֆոս,
- երկարսենի պենտաօքսիդ,
- էթիոն,
- սնդիկ,
- մետիդաթիոն,
- թիոդիկարբ:

Բրոմացիլ

Կոմիտեն որոշեց, որ քանի որ բրոմացիլի համար վերջնական կարգավորիչ որոշման վերաբերյալ կա միայն մեկ ծանուցում նախնական հիմնավորված համաձայնության մեկ տարածաշրջանից՝ մասնավորապես Կոստա Ռիկայից, որը համապատասխանում է Կոնվենցիայի II հավելվածով սահմանված չափանիշներին, ներկայումս ոչ մի հետագա գործողություններ չեն ձեռնարկվելու:

Կարբարիլ

Կոմիտեին ներկայացվել է թունաքիմիկատների կատեգորիային պատկանող կարբարիլի վերաբերյալ վերջնական կարգավորիչ որոշման մասին ծանուցում Աֆրիկայի նախնական հիմնավորված համաձայնության տարածաշրջանից (Մոզամբիկ):

Քննարկման արդյունքում Կոմիտեն լրացուցիչ մանդատ տվեց քլորֆենվինֆոսի մասով ստեղծված կոնտակտային խմբին, մասնավորապես՝ քննարկելու, թե արդյոք Կոնվենցիայի II հավելվածի (բ) (iii) կետում նշված չափանիշը, կապված կարբարիլի հետ, բավարարվել է և եթե կհամարի, որ ծանուցումը համապատասխանում է այս չափանիշին, մշակել նման եզրակացության հիմնավորման նախագիծ:

Քլորֆենվինֆոս

Կոմիտեին ներկայացվել է Աֆրիկայի նախնական հիմնավորված համաձայնության տարածաշրջանից (Մոզամբիկ) թունաքիմիկատների կատեգորիային պատկանող քլորֆենվինֆոսի վերաբերյալ վերջնական կարգավորիչ որոշման մասին ծանուցում:

Քննարկումից հետո Կոմիտեն համաձայնեց, որ Մոզամբիկի ծանուցումը համապատասխանում է II Հավելվածի բոլոր չափանիշներին՝ բացառությամբ (բ) (iii) կետում նշված չափանիշի: Կոմիտեն համաձայնել է ստեղծել կոնտակտային խումբ:

Քլորպիրիֆոս

Կոմիտեն ծանուցումներ էր ստացել թունաքիմիկատների կատեգորիային պատկանող քլորպիրիֆոսի համար վերջնական կարգավորիչ որոշման մասին նախնական հիմնավորված համաձայնության երկու տարածաշրջաններից:

Քննարկումից հետո Կոմիտեն համաձայնեց, որ Մալայզիայի և Շրի Լանկայի ծանուցումները համապատասխանում են Կոնվենցիայի II Հավելվածի բոլոր չափանիշներին, որ Թուրքիայի ծանուցումը բավարարում է II Հավելվածի բոլոր

չափանիշներին՝ բացառությամբ (բ) (iii) կետում նշված չափանիշի և որ Եվրամիության ծանուցումը պահանջում է հետագա քննարկում: Կոմիտեն ստեղծեց կոնտակտային խումբ՝ այս եզրակացության հիմնավորման նախագիծը մշակելու համար:

Երկարսենի պենտաօքսիդ

Քննարկման հիման վրա Կոմիտեն համաձայնեց, որ Կորեայի Հանրապետության ծանուցումը համապատասխանում է II Հավելվածի բոլոր չափանիշներին՝ բացառությամբ բ (iii) կետում նշված չափանիշի: Կոմիտեն լրացուցիչ մանդատ տվեց սնդիկի մասին ենթակետով ստեղծված կոնտակտային խմբին՝ շարունակելու քննարկել, թե արդյոք Եվրամիության կողմից ծանուցումը համապատասխանում է (բ) (iii) կետում նշված չափանիշին, և եթե գտնում է, որ ծանուցումը համապատասխանում է այս չափանիշով, մշակել սույն եզրակացության հիմնավորման նախագիծը՝ հիմնվելով քննարկման ընթացքում ստացված ծանուցումների և մեկնաբանությունների վրա:

Կոմիտեն որոշեց, որ քանի որ երկարսենի պենտաօքսիդի վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության մեկ տարածաշրջանից միայն մեկ ծանուցում է համապատասխանում է Կոնվենցիայի II Հավելվածում սահմանված չափանիշներին, մասնավորապես՝ Եվրամիության ծանուցումը, այս քիմիական նյութի համար ներկայումս ոչ մի հետագա գործողություններ չեն ձեռնարկվելու:

Էթիոն

Կոմիտեին տրամադրվել են ծանուցումներ թունաքիմիկատների կատեգորիային պատկանող էթիոնի վերաբերյալ վերջնական կարգավորիչ որոշման մասին նախնական հիմնավորված համաձայնության երկու տարածաշրջաններից, ինչպես նաև համապատասխան օժանդակ տեղեկատվություն:

Կոմիտեն ստեղծել է կոնտակտային խումբ՝ մանդատով քննարկելու, թե արդյոք II Հավելվածի (բ) (iii) կետում նշված չափանիշը բավարարվել է ծանուցման մեջ և, եթե գտնում է, որ ծանուցումը համապատասխանում է այդ չափանիշին, մշակել նման եզրակացության հիմնավորման նախագիծ:

Սնդիկ

Կոմիտեի քննարկմանը ներկայացվել են չորս ծանուցումներ սնդիկի վերաբերյալ վերջնական կարգավորիչ որոշման մասին նախնական հիմնավորված համաձայնության երեք տարածաշրջաններից, մասնավորապես՝ մեկը թունաքիմիկատների և արդյունաբերական նյութերի համար Ասիական նախնական հիմնավորված համաձայնության տարածաշրջանից (Ինդոնեզիա), երկուսը արդյունաբերական նյութերի համար՝ Եվրոպական նախնական հիմնավորված համաձայնության տարածաշրջանից (Եվրամիություն և Թուրքիա) և մեկը արդյունաբերական կատեգորիայում Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի տարածաշրջանից (Կոլումբիա):

Քննարկման հիման վրա Կոմիտեն համաձայնեց, որ Եվրամիության և Կոլումբիայի ծանուցումները համապատասխանում են Կոնվենցիայի II Հավելվածի բոլոր չափանիշներին, մինչդեռ Ինդոնեզիայի և Թուրքիայի ծանուցումները համապատասխանում են II Հավելվածի բոլոր չափանիշներին՝ բացառությամբ (բ) կետի չափանիշների:

Կոմիտեն Քարտուղարությանը խնդրել է նախապատրաստել որոշման նախագիծ, ներառյալ առաջարկություն՝ սնդիկը Կոնվենցիայի III Հավելվածում որպես արդյունաբերական նյութ ներառելու վերաբերյալ, ինչպես նաև որոշման ընդունմանն աջակցող փաստաթղթի նախագիծ նախապատրաստելու որոշում և աշխատանքային պլանի նախագիծ՝ որոշման ընդունմանն աջակցող փաստաթղթի նախագիծը մշակելու համար:

Մետիդաթիոն

Կոմիտեն ծանուցում է ստացել թունաքիմիկատների կատեգորիային պատկանող մետիդաթիոնի վերաբերյալ վերջնական կարգավորիչ որոշման մասին Աֆրիկյան նախնական հիմնավորված համաձայնության տարածաշրջանից (Մոզամբիկ):

Կոմիտեն լրացուցիչ մանդատ տվեց քլորֆենվինֆոսի մասով ստեղծված կոնտակտային խմբին, մասնավորապես՝ քննարկելու, թե արդյոք մետիդաթիոնի համար բավարարվել է II Հավելվածի (բ) (iii) կետում նշված չափանիշը, և եթե խումբը գտնում է, որ ծանուցումը համապատասխանում է այս չափանիշին, ապա մշակել նման եզրակացության հիմնավորման նախագիծ:

Թիոդիկարբ

Կոմիտեին ներկայացվել է Աֆրիկյան նախնական հիմնավորված համաձայնության տարածաշրջանից (Մոզամբիկ) թունաքիմիկատների կատեգորիային պատկանող թիոդիկարբի վերաբերյալ վերջնական կարգավորիչ որոշման մասին ծանուցում:

Քննարկումից հետո Կոմիտեն լրացուցիչ մանդատ տվեց քլորֆենվինֆոսի մասով ստեղծված կոնտակտային խմբին, մասնավորապես՝ քննարկելու, թե արդյոք թիոդիկարբի համար բավարարվել է II Հավելվածի (բ) (iii) կետում նշված չափանիշը, և եթե գտնում է, որ ծանուցումը համապատասխանում է այս չափանիշին, ապա մշակել նման եզրակացության հիմնավորման նախագիծ:

7. <u>ԱՐԴՅՈՒՆՔԸ</u>

Կոմիտեն որոշեց հաստատել մեթիլբրոմիդի և պարակվատի վերաբերյալ որոշման ընդունմանն աջակցող փաստաթղթի նախագիծը և այն ուղարկել Կողմերի Համաժողովին քննարկման համար՝ համապատասխան մեկնաբանությունների հետ միասին:

Մնացած քիմիական նյութերը (բրոմացիլ, կարբարիլ, քլորֆենվինֆոս, քլորպիրիֆոս, երկարսենի պենտաօքսիդ, էթիոն, սնդիկ, մետիդաթիոն, թիոդիկարբ) քննարկելուց հետո փաստաթղթերն ուղարկվել են կոնտակտային խմբին լրամշակման:

Իրավախորհրդատու՝ Ա. Ալեքսանդրյան